ԲԱԹՆԱԲԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հանգեաւ ի Տէր.

Հանգուցեալը ծնուած լինելով Գանձակում՝ յարբունա հասակի հասնելուց յետոյ իւր էն ունենում կրօնաւորութիւն և այս իսկ պատճառով դիմումէ զանազան նշանաւոր վանքեր, և վերջապէս Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքում ընդունվումէ միաբան, հուսկ ուրեմն Սարկաւագ ձեռնադրուելով՝ կարգվումէ Ս. Յակոբայ վանուց մէջ լուսարար։ Երկար ժամանակ այս պաշտօնը վարելուց յետոյ ձեռնադրութեամբ հանգուցեալ ի Տէր Յովհաննէս պատրիարքի տեղւոյն 1857 թուին ձեռնադրվումէ Աբեղայ. Ս. Յակոբեանց վանքում զանազան պաշտօններ է վարում, և Երուսաղէմին վիճակեալ տեսչութեանց մէջ ժամարարի պաշտօն ևս վարելուց յետոյ Վարդապետական մանաւոր իշխանութիւն ստանալով՝ կարգվումէ Դամասկոսի տեսուչ. այս իւր պաշտօնավարութեան ժամանակ՝ ի հիմանէ վերաշինումէ Հայոց Եկեղեցին՝ որ 1860 թ. խռովութեան ժամանակ քանդուել էր Տաճիկներից. երկար ժամանակ վարումէ Դամասկոսի տեսչութեան պաշտօնը, և վերադառնալով Երուսաղէմ կարգվում է տեղւոյն վարչական ժողովոյ անդամ։ Հանգուցեալը թողնում է Երուսաղէմը և գնալով Կ. Պոլիս՝ ստանում է ծայրագոյն վարդապետական

իշխանութիւն և կարգվում Արաբկերի առաջնորդ։ Յետ այնորիկ նորից գնում է Երուսաղէմ և վերջապէս առանձնանում է Արղնիի Ս. Աստուածածնի վանքում։

Վերջին արեւելեան պատերազմից յետոյ 1878 թուին գալով Մայր Աթոռս՝ հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Կաթողիկոսից նշանակուեց Մայր Տաճարի մէջ ժամօրհնող, և օրինակելի ժրութեամբ համարեա ինն տարի վարելով նոյն պաշտօնը՝ ամսոյս 21-ին առաւօտը վաղ քաջ, ժամը 4-ին ի հասակի վաթսուն ամաց կնքեց իւր մահկանացուն, և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ ամփոփուեց Մայր Աթոռոյս միաբանից գերեզմանատան մէջ։

Հանգուցեալը՝ իւր մահից յետոյ թողեց միաբանութեան մէջ առաքինի մարդու յիշատակը, և ազգիս ընթերցասէր մասին մի հետաքրքիր վաստակ՝ «Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի ի Յակոբայ առաքելոյ Տեառն եղբօրէ մինչև ցմերս ժամանակս, տպեալ ի Կ. Պոլիս 1872 թուին»։ Այս հետաքրքիր աշխատասիրութիւնը բաղկացած է 106 միջակագիր երեսից՝ բաժանուած երկու գրքերի յատուկ ծանօթութիւններով. «Առաքելական յաջորդութիւն Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ» վերտառութեամբ գլխի մէջ համառօտելով (1—4 դարու սկիզբը) Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս առաքեալների՝ Հայաստանեայցս եկեղեցւոյ մէջ յաջորդների անուանական ցուցակը համառօտ կենսագրական տեղեկութեամբ՝ կցումէ մի ազիւսակ 12 երեսից բաղկացեալ վերտառութեամբ «Ազիւսակ ժամանակագրական յետ Քրիստոսի դար Ա.—ԺԹ.»։

Հանգիստ և երկնից արքայութիւն մաղթելով հանգուցեալին համար՝ կրկնենք «Յիշատակն արդարոյ օրհնութեամբ եղիցի»։